ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 18 -Ա « 20 » 01 2023թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

Восстановимая подпись

Подписано: AVETISYAN ARNAK 1701920336 ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2023 թվականի հունվարի 20 -ի № 18- Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քարտուղարությունում՝ Կոմիտեի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ հանձնարարականների իրականացման համար՝ (Կոմիտեում անցկացվող խորհրդակցությունների, ժողովների, գործակարգավարական նիստերի, Կոմիտեի նախագահի կամ այլ ներկայացուցիչների պաշտոնական այցերի և հանդիպումների լուսանկարահանում, կայքի այլ բաժինների համար պատրաստվող նյութերի՝ լուսանկարների և/կամ գրաֆիկական պատկերների մշակում և այլն) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ առնվազն մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ լուսանկարչության բնագավառում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

2) «Տեղեկատվության ազատության մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքների անհրաժեշտ իմացություն,

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է վեց ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը վեց ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. Կոմիտեում անցկացվող գործակարգավարական նիստերի, Կոմիտեի նախագահի կամ այլ ներկայացուցիչների պաշտոնական այցերի և/կամ հանդիպումների լուսանկարահանում,

բ. Կոմիտեի պաշտոնական կայքի ամենօրյա թարմացման աշխատանքներն իրականացնելու նպատակով, այդ թվում՝ Կոմիտեի նոր պաշտոնական կայքի համար ստորաբաժանումների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց, ինչպես նաև կայքի այլ բաժինների համար պատրաստվող նյութերի՝ լուսանկարների և/կամ գրաֆիկական պատկերների մշակում և տրամադրում,

գ. պետական գույքի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացման համար մասնակցություն այլ երկրների պետական գույքի կառավարման ոլորտը համակարգող գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով նախապատրաստական աշխատանքներին,

դ. Կոմիտեի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը երեք ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիս հետո և ամփոփիչ փուլ, ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«դ» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. Կոմիտեում անցկացվող գործակարգավարական նիստերի, Կոմիտեի նախագահի կամ այլ ներկայացուցիչների պաշտոնական այցերի և/կամ հանդիպումների լուսանկարահանումն իրականացված է,

բ. Կոմիտեի պաշտոնական կայքի ամենօրյա թարմացման աշխատանքներն իրականացնելու նպատակով, այդ թվում՝ Կոմիտեի նոր պաշտոնական կայքի համար ստորաբաժանումների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց, ինչպես նաև կայքի այլ բաժինների համար պատրաստված նյութերի՝ լուսանկարները և/կամ գրաֆիկական պատկերները մշակվել և տրամադրվել են,

գ. պետական գույքի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացման համար մասնակցությունն այլ երկրների պետական գույքի կառավարման ոլորտը համակարգող գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով նախապատրաստական աշխատանքներն իրականացված են,

դ. Կոմիտեի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներն իրականացված են: